ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 111/10

Քաղ. Երեւան 31 մայիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ.Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. մայիսի 31-ի նիստում (արձանագրություն N80/10) քննարկեց «Բի ընդ Զեթ դիզայն» սահմանափակ պատասխանատվության ընկերության 2010թ. մայիսի 5-ի «Բի ընդ Զեթ դիզայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա. Պետրոսյանի 2010թ. մայիսի 14-ի «PREMIUM GOLD» (հայտի համար՝ 20091340) համակցված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը։

Մերժման համար հիմք են հանդիսացել "Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին" ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի "բ" ենթակետը և "Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի" 15-րդ կետի 2-րդ եւ 93-րդ կետի 2-րդ ենթակետը, համաձայն որի, որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար միջազգային գրանցում ունեցող ավելի վաղ առաջնությամբ այլ անձանց ապրանքային նշանների առկայության պատճառով։

Մերժման հիմքում արձանագրված է, որ «PREMIUM GOLD» նշանը չի կարող գրանցվել քանի որ այն շփոթելու աստիճան նման է 32-րդ դասի ապրանքների համար

ավելի վաղ առաջնությամբ արդեն գրանցված «GOLD PREMIUMJUICES» ("Wimm-Bill-Dann Brands Co. Ltd., d.13, str. 2, ul. Solyanka, RU-109028 Moscow (RU), IR 800607, 1006712") ապրանքային նշանին:

Նշված է նաեւ, որ մնացած ապրանքների համար գործում է "Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին" ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի "գ" ենթակետը եւ "Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կարգի" 90-րդ կետի 1-ին եւ 8-րդ ենթակետերը, համաձայն որի, որպես ապրանքային նշան չեն գրանցվում այն նշանները, որոնք չունեն տարբերակող հատկություն եւ նկարագրական կամ գովաբանական բնույթի են: Ուստի հայտարկվող «PREMIUM GOLD» նշանը չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան, քանի որ նրա պատկերային մասը չունի տարբերակող հատկություն, իսկ «PREMIUM» և « GOLD» անգլերեն բառերը, որոնք թարգմանաբար նշանակում են «բարձրագույն տեսակ», «լավագույն որակ» գովաբանական բնույթի են և մատնանշում են տվյալ ապրանքների որակական հատկանիշները:

Բողքարկողը փաստել է, որ ներկայացված պատկերային մասը կամ/և բառային մասի յուրահատուկ գրաֆիկական կատարումը էապես տարբերվում է այլ գրանցված նշաններից:

Հայտարկվող նշանը, ինչպես նշված է վերոհիշյալ հայտի դիմումի "նշանի նկարագրությունը" բաժնում "Կազմված է ոսկեգույն մետաղադրամի պատկերից, որի կենտրոնում գրված է մեծ «1» թվանշանը, ընդ որում «1»–ի ուղղահայաց հատվածի դերն է կատարում ուղղահայաց գրված լատինատառ «PREMIUM GOLD» գրառումը: «1»–ի հորիզոնական մասը կատարված է անկյունագծորեն ձգվող գծերով: Մետաղադրամի ներքևի աջ սեգմենտը նույնպես ծածկված է անկյունագծորեն ձգվող գծերով: Մետաղադրամի մնացած հատվածում եզրի երկայնքով, պատկերված են հնգաթև աստղիկներ: Մետաղադրամի եզրը ատամնավոր է. ատամները կլորավուն են: Առկա է նաև լատինատառ «SINCE 2008» գրառումը: Բողոքարկողի համոզմամբ նշանի թ՛ե բառային մասի, և թ՛ե պատկերային մասի յուրահատուկ կատարումը, իրենց տարբերիչ հատկությունների շնորհիվ բացառում են նշանի շփոթումը որեւէ մեկ այլ նշանի հետ, որը պարունակում է նույն «PREMIUM GOLD» գրառումը:

Ելնելով վերը նշվածից, բողոքարկողը խնդրում է վերանայել մերժման մասին որոշումը եւ գրանցել վերոհիշյալ նշանը՝ պահպանություն չտրամադրելով ապրանքային նշանի բառային մասին։

Բողոքը ներկայացրեց կոլեգիայի անդամ պրն.Ա. Բաբայանը, նա նշեց, որ 2010 թվականի մարտի 4-ի կրկնական փորձաքննության որոշմամբ «Բի ընդ Զեթ դիզայն» սահմանափակ պատասխանատվության ընկերության «PREMIUM GOLD» ապրանքային նշանի իրավական պահպանությունը ՀՀ տարածքում մերժվել է եւ ներկայացրեց մերժման հիմքը։

Կոլեգիայի անդամ պրն. Ա. Բաբայանը նշեց, որ կոլեգիայի անդամների ընդհանուր քննարկման արդյունքում որոշվեց վերանայել մերժման հիմքը եւ ինչպես իր բողոքում նշել էր բողոքարկողը, մերժված ապրանքային նշանը համակցված է եւ ներկայացված պատկերային մասը ունի յուրահատուկ գրաֆիկական կատարում, որը հիմք կարող է ծառայել, որպեսզի հիշյալ ապրանքային նշանը գրանցվի առանց բառային մասին պահպանություն տրամադրելու։

Ընդհանուր քննարկման արդյունքում հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Բի ընդ Զեթ դիզայն» ընկերության բողոքը մասնակիորեն եւ գրանցել «PREMIUM GOLD» (հայտի համարը՝ N 20091340) հայտարկված ապրանքային նշանը առանց բառային մասին ինքնուրույն պահպանություն տրամադրելու։

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան։

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան